# ԵՍ ԵՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՅԱՆՔԸ

## ՅՈԹ ՆՇԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՏԱՐԵՑ ՀԻՍՈՒՍԸ

1. ՋՈՒՐԸ ԳԻՆԻ Է ԾԻՆՈՒՄ – ՀՈՎ. 2.31
2. ԱԶՆՈՒԱԿԱՆԻ ՈՐԴՈՒՆ ԲԺՇԿՈՒՄ - ՀՈՎ. 4.46-54
3. ԿԱՂ ՄԱՐԴՈՒ ԲԺՇԿՈՒՄԸ ԲԵԹԵԶԴԱՅՈՒՄ – ՀՈՎ. 5.1-9
4. ՀԻՆԳ ՀԱՑՈՎ և ԵՐԿՈՒ ՁՈՒԿՈՎ ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀՈԳԻ Է ԿԵՐԱԿՐՈՒՄ – ՀՈՎ. 6.1-14
5. ԾՈՎԻ ՎԵՐԱՅ ՄԱՆ ԳԱԼՈՎ ԳՆՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄՕՏ – ՀՈՎ. 6.17-20
6. ԲԱՆՈՒՄ Է ԾՆՈՒՆԴԻՑԸ ԿՈՅՐ ՄԻ ՄԱՐԴԻ ԱՉՔԵՐԸ – ՀՈՎ. 9.1-7
7. ՀԱՐՈՒՑԱՆՈՒՄ Է ՄԵՌԱԾ ՂԱԶԱՐՈՍԻՆ – ՀՈՎ. 11.1-44

## ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈԹ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԵՍ ԵՄ ԿԵԱՆՔԻ ՀԱՑԸ – ՀՈՎ. 6.35
2. ԵՍ ԵՄ ԱՇԽԱՐՀՔԻ ԼՈՅՍԸ - ՀՈՎ. 8.12
3. ԵՄ ՈՉԽԱՐՆԵՐԻ ԴՈՒՌԸ – ՀՈՎ. 10.7
4. ԵՍ ԵՄ ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ – ՀՈՎ. 10.11
5. ԵՍ ԵՄ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ – ՀՈՎ. 11.25
6. ԵՍ ԵՄ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵԱՆՔԸ. – 14.6
7. ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՈՐԹԸ – ՀՈՎ. 15.1

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. ՀՈՎ. 11.1-46

*1 Ղազարոս անունով մի հիվանդ կար Բեթանիայից՝ Մարիամի ու նրա քույր Մարթայի գյուղից: 2 Այն Մարիամն էր, որ Տիրոջը յուղով օծեց և նրա ոտքերն իր մազերով սրբեց: Նրա եղբայր Ղազարոսը հիվանդ էր:*

*Հով. 12.1-3 – Զատկից վեց օր առաջ Հիսուսը եկավ Բեթանիա, որտեղ ապրում էր Ղազարոսը, և որին նա մեռելներից հարություն էր տվել: Այնտեղ նրա համար ընթրիք պատրաստեցին: Մարթան սպասարկում էր, իսկ Ղազարոսը նրա հետ սեղան նստածներից մեկն էր: Արդ Մարիամը մեկ լիտր նարդոսի ազնիվ, թանկարժեք յուղ վերցրեց, օծեց Հիսուսի ոտքերը և իր մազերով սրբեց նրա ոտքերը: Եվ տունը լցվեց յուղի բուրմունքով:*

> *Եթե ձեր մտքում հարց առաջացավ, թե արդյոք սա նույն Մարիամն է, որ դարձյալ յուղով օծեց և իր մազերով սրբեց Հիսուսի ոտքերը, ապա ձեզ հիշեցնեմ, որ ձեր հիշած դեպքը կատարվեց Կափառնաում քաղաքում: Այս Մարիամը Ղուկասի ավետարանի Մարիամը չէ, քանի որ ամեն անգամ երբ այս Մարիամի մասին հիշատակվում է, գրվում է իր բնակավայրի անունը՝ Բեթանիա, որտեղ ապրում էր իր եղբոր՝ Ղազարոսի և քույր՝ Մարթայի հետ:*

*3 Արդ նրա քույրերը Հիսուսին լուր ուղարկեցին ու ասացին. Տե՛ր, քո սիրելի (φιλέω) ընկերը հիվանդացել է: 4 Երբ Հիսուսը լսեց, ասաց. Այդ հիվանդությունը մահաբեր չէ, այլ Աստծու փառքը հայտնի դարձնելու համար է, որպեսզի Աստծու Որդին նրա միջոցով փառավորվի: 5 Հիսուսը սիրում էր (ἀγαπάω) Մարթային, նրա քրոջն ու Ղազարոսին: 6 Եվ երբ լսեց, որ նա հիվանդ է, երկու օր մնաց այնտեղ, որտեղ հիվանդն էր: 7 Դրանից հետո աշակերտներին ասաց. Եկե՛ք նորից Հուդա գնանք:*

- ***Հիսուսի կողմից ՍԻՐՎԱԾ լինելը չի վերացնում ՎԻՇՏԸ մեր կյանքից:***

  *Հիսուսը սիրում էր իր ընկերներին՝ Մարթային, Մարիամին և Ղազարոսին (հ. 3, 5, 36), սակայն Ղազարոսը մահացավ: 5-րդ և 6-րդ համարները կարծես թե հակասական են. Այո, Հիսուսը սիրում էր Մարթային և նրա քրոջը և Ղազարոսին: Սակայն, երբ նա լսեց, որ Ղազարոսը հիվանդ է, նա դիտավորիալ երկու օր ավել մնաց այնտեղ: Ինչո՞ւ Հիսուան անմիջապես չուղևորվեց Բեթանիա՝ Ղազարոսին բուժելու: Երբ Հիսուսը վերջապես հասավ Բեթանիա, և՛ Մարթան, և՛ Մարիամն ասացին Հիսուսին. Տե՛ր, եթե դու այստեղ լիներիր, իմ եղբայրը չէր մահանա (հ. 21, 32):*

*17 Երբ Հիսուսը եկավ, նրան արդեն չորս օր գերեզմանի մեջ դրված գտավ:*
*18 Բեթանիան Երուսաղեմին շուրջ տասնհինգ ասպարեզ էր մոտ: 19 Եվ հրեաներից շատերն էին եկել Մարթայի ու Մարիամի մոտ՝ իրենց եղբոր համար նրանց մխիթարելու: 20 Արդ երբ Մարթան լսեց, որ Հիսուսը գալիս է, գնաց նրան ընդառաջ, իսկ Մարիամը տանը նստած էր: 21 Մարթան Հիսուսին ասաց. Տե՛ր, <u>եթե</u> այստեղ լիներիր, իմ եղբայրը չէր մահանա: 22 Բայց հիմա էլ գիտեմ, որ Աստծուց ինչ էլ որ խնդրես, Աստված կտա քեզ: 23 Հիսուսը նրան ասաց. Քո եղբայրը հարություն կառնի: 24 Մարթան նրան ասաց. Գիտեմ, որ հարություն կառնի վերջին օրը՝ հարության ժամանակ:*

*25 Հիսուսը նրան ասաց. Ես եմ հարությունը և կյանքը. **<u>ով հավատում է ինձ</u>**, թեկուզ և մեռնի, կապրի: 26 Եվ ամեն ոք, ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի: Սրան հավատո՞ւմ ես: 27 Մարթան նրան ասաց. Այո՛, Տե՛ր, ես հավատացել եմ, որ դու ես Քրիստոսը՝ Աստծու Որդին, որ աշխարհ էիր գալու:*

- *Հիսուսը հարցրեց Մարթային. **«Սրան հավատո՞ւմ ես»:** (հ. 26):*

- *Հավատալ բառը հիշատակվում է ութսունհինգ անգամ Հովհաննեսի Ավետարանում: Ութ անգամ այստեղ միայն այս գլխում:*

***25 Ես եմ հարությունը և կյանքը.***

*Հայտնություն 1.18 – Ես մեռա և ահա կենդանի եմ հավիտյանս հավիտենից: Ամեն: Եվ ունեմ դժոխքի ու մահվան բանալիները:*

## I. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԸ ՊԵՏՔ Է ԱՊՐԵԼ:

- ***Քայլել նոր կյանքով և մտքի նորոգությամբ***

*Հռ. 8.11 – Եվ եթե Հիսուսին մեռելներից հարություն տվողի Հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգու միջոցով, որ բնակվում է ձեր մեջ:*

*Այս հատվածը վերաբերում է ոչ թե մահացածների ապագա հարությանը, այլ Հոգու կենդանացնող զորությանը, այն զորությանը, որը կարող է օգնել մեզ այստեղ և հիմա «Քայլել նոր կյանքով և մտքի նորոգությամբ»:*

*35 Հիսուսն արտասվեց:*

- ***Այո, մենք էլ լաց ենք լինում, երբ տեսնում ենք մեր սիրելիների մահը, բայց հույսը չենք կորցնում:***

*36 Այդժամ հրեաներն ասում էին. Տես ինչպես էր նրան սիրում: 37 Նրանցից ոմանք ասում էին. Նա, որ կույրի աչքերը բացեց, չէ՞ր կարող այնպես անել, որ Ղազարոսն էլ չմեռներ: 38 Արդ Հիսուսը, դարձյալ ինքն իր մեջ խռովվելով, գերեզման եկավ: Դա մի քարայր էր՝ վրան մի քար դրված: 39 Հիսուսն ասաց. Վերցրեք այդ քարը: Մեռածի քույրը՝ Մարթան, նրան ասաց. Տե՛ր, հիմա արդեն նեխած կլինի, որովհետև չորս օրվա է:*

*40 Հիսուսը նրան ասաց. Քեզ չասացի՞, որ <u>եթե</u> հավատաս, Աստծու փառքը կտեսնես:*

## II. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱԳԱ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԻՆ ՊԵՏՔ Է ԱՆՀԱՄԲԵՐ ՍՊԱՍԵԼ:

*41 Եվ քարը բարձրացրին: Հիսուսն աչքերը վեր բարձրացրեց ու ասաց. Հայր, շնորհակալ եմ քեզ, որ ինձ լսեցիր: 42 Ես գիտեի, որ միշտ լսում ես ինձ. բայց դա ասացի շուրջս կանգնած ժողովրդի համար, որպեսզի հավատան, որ դո՛ւ ինձ ուղարկեցիր: 43 Եվ երբ այս ասաց, բարձրաձայն աղաղակեց. ,Ղազարո՛ս, դո՛ւրս եկե: 44 Եվ մեռելը դուրս ելավ՝ ձեռքերն ու ոտքերը պատանով կապված և երեսը թաշկինակով պատված: Հիսուսը նրանց ասաց. Դրան արձակե՛ք ու թողե՛ք, որ քայլի:*

- ***Ինչպես Մարթան և Մարիամը, մենք նույնպես անհամբեր սպասում ենք հարության ապագա օրվան:***

*Ա Թես. 4.16-18 – քանի որ Տերն ինքը հրամանի ազդարարմամբ, հրեշտակապետի ձայնով ու Աստծու փողի հնչմամբ երկնքից ցած կիջնի, և Քրիստոսով մեռածները նախ հարություն կառնեն, և հետո մենք՝ ողջերս, որ մնացել ենք, նրանց հետ միասին ամպերի մեջ կհափշտակվենք՝ Տիրոջը դիմավորելու, և այդպես ամեն ժամ Տիրոջ հետ կլինենք: Ուրեմն միմյանց մխիթարե՛ք այս խոսքերով:*

*Փիլ. 3.20-21 – Բայց մեր բնակությունը երկնքում է, այնտեղից էլ սպասում ենք Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին, որը մեր խոնարհ մարմինը պիտի նորոգի և իր փառավոր մարմնին կերպարանակից դարձնի այն զորությամբ, որ ամեն ինչ հնազանդեցնում է իրեն:*

*Ա Կոր. 15.51-55 –Եվ երբ այս ապականացու մարմինը անապականությամբ զգեստավորվի, և այս մահկանացու մարմինը՝ անմահությամբ, այդ ժամանակ կկատարվի այն խոսքը, որ գրված է. Մահը հաղթության մեջ ընկղմվեց (Ես. 25.8): Ո՛վ մահ, ո՞ւր է քո խայթոցը, գերեզմա՛ն, ո՞ւր է քո հաղթությունը (հմմտ. Ովս. 13.14)*

*45 Արդ հրեաներից շատերը, որ Մարիամի մոտ էին եկել, երբ տեսան, թե Հիսուսն ի՛նչ արեց, հավատացին նրան: 46 Բայց նրանցից ոմանք փարիսեցիների մոտ գնացին ու պատմեցին նրանց, ինչ որ Հիսուսն արեց:*

***Այս շաբաթ եկեք կարդանք Ղուկաս 16.19-31 հատվածը, աղքատ Ղազարոսի առակը:***

## ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ